

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 22

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

03.09.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Ղուկասյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Ա.Բեջանյանը, Վ.Ջաղինյանը, Ա.Մատինյանը, Ա. Հարությունյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա. Եղիազարյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Աղլոյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Հ.Ղամբարյանը - մարզպետի խորհրդական
- Մ.Կիրակոսյանը - մարզպետի օգնական
- Գ.Սաղաթեյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի Լոռու մարզ կատարած աշխատանքային այցի արդյունքների մասին
/Հրանտ Մարգարյան/
2. ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից ստացած հանձնարարականների կատարման ընթացքի և նախորդ շաբաթվա ընթացքում կատարած աշխատանքների մասին
/Նարեկ Սարգսյան/
3. Գերատեսչություններից ստացված հանձնարարականների կատարման և նախորդ շաբաթվա ընթացքում կատարած աշխատանքների ընթացքի մասին
/Ա.Խաչատրյան, Ա.Ղուկասյան, Ս. Սարուխանյան/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Արտավազը Բեջանյան/
5. 2018-2019 ուսումնական տարվա նախապատրաստական ընթացիկ աշխատանքների մասին
/Արփիինե Մատինյան/
6. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին
/ Գրիգոր Հակոբյան/
7. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ա.Ղուկասյանին, Ս.Սարուխանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին և ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել և վերահսկել սեփական եկամուտների հավաքագրման եռամսյակային պլանային ցուցանիշների կատարման ապահովումը:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Ապահովել արձանագրային և այլ հանձնարարականների սահմանված ժամկետներում և ամբողջական կատարումը:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետի տեղակալ Ա. Մատինյանին, աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

15-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ Ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնաժողովի նախապատրաստման շրջանակներում Լոռու մարզի տաղավարի բովանդակային ներկայացման և մատուցման վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ